

նայն¹ բազմութիւն զաւրաց² իւրոց: 16 Եւ հանդէս առնէր ամենայն ուսմանց, եւ ընդաճէր³ 4գմագութիւնն եւ զբաւղէութիւնն եւ զամենայն⁵ ուսմունս աշխարհին իւրոյ: 17 Արկանէր⁶ ի ներքս⁷ եւ զքրիստոնէութիւն⁸ կեղծաւորութեամբ, եւ ասէր զայրացեալ մտաւք. «Չարցէք, քննեցէք, տեսէք⁹. թող որ 10լաւն է՝ ընտրեալ կալցուք¹¹»: 18 12Եւ փութայր որ ինչ ի մտին էր, զի¹³ վաղվաղակի կատարեսցէ¹⁴:

19 15Իսկ ի կողմանց կողմանց քրիստոնէայքն¹⁶, որ ի զաւրուն էին, իմացան զհուրն¹⁷ որ ի ծածուկ¹⁸ վառեալ բորբոքէր¹⁹, եւ կամէր հրդեհել զլէրիսս եւ զդաշտս առհասարակ: 20 Ձեռան²⁰ եւ նոքա անծախական հրովն²¹, եւ սաստկապէս պատրաստեցան առ ի²² փորձութիւն²³ զաղտնի մեքենայիցն:

21 Սկսան այնուհետեւ բարձր բարբառով, սաղմոսիւք եւ երգովք²⁴ հոգեւորաւք եւ մեծապայծառ²⁵ վարդապետութեամբ յայտ յանդիման մեծի բանակին²⁶ զպաշտունն ցուցանել²⁷. եւ²⁸ աներկիւղ²⁹ առանց զանգիտելոյ՝ ո՛ր որք³⁰ եւ երթայր¹ առ նոսա, ուսուցանէին կամակար: 22 Եւ Տէր յաշողէր² նոցա

1 *և* ամենայն

2 *ԲԱ* զօրացն

3 *ԱԲԳԴԵԶԷԸԹԺԻԼԽԾԿՅՏՅՏՅՏՅՏ* ընդաճէր *A* անդաճէր

4 *ԱԲԴԶԷԹԻՏՅՏՅՏ* զամենայն մոգութիւնն *A* զմոգութիւն եւ զբաւղէութիւն *LS՝ չիք* եւ զբաւղէութիւնն

5 *ԳԵԸԺԼԽԾԿՅՏՅՏ* չիք զամենայն

6 *ԲԴ* եւ արկանէր

7 *Ա* ի ներք

8 *ԳԴԷԸԺԼԿՏՅՏ* զքրիստոնէութիւնն *Յ չիք* «եւ զամենայն ... զքրիստոնէութիւն»

9 *ԲԴ* տեսէք քննեցէք *Ի չիք* տեսէք

10 *Բ* լաւ է՝ ընտրեալ

11 *Ի* եւ կալցուք

12 *Բ* եւ փոյթ ի մտի կայր *Դ* որ ի մտին կայր

13 *ԱԶԷ* թէ *փիս* զի

14 *ԱԳԵԶԷԹԺԻԼԽԿՅՏՅՏՅՏՅՏՅՏՅՏ* կատարեսցէ *ԲԱ Վ¹⁸⁵²* կատարեսցի *Թ* թէ վաղվաղակի կատարեսցէ

15 *ԲԴ* իսկ քրիստոնէայքն որ ի կողմանց կողմանց

16 *Ե* քրիստոնայքն

17 *Վ¹⁸⁵² A* զխորհուրդն *փիս* զհուրն

18 *A* ծածուկ

19 *Թ* բորբոքիւր

20 *ԳԵԸԺԼԽԿՅՏՅՏՅՏՅՏ* ջեռնուին

21 *ԱԲԳԵԶԷԹԺԻԼԽԿՅՏՅՏՅՏՅՏ* հրովն *A* հրով

22 *A չիք* ի

23 *ԱԶԷԹԻՏՅՏՅՏ* ի փորձութիւնն *ԳԵԸԺԼԽԿՅՏՅՏՅՏՅՏՅՏՅՏՅՏ* առ ի փորձութիւնն *Դ* փորձութիւնսն

24 *ԱԹԻ չիք* եւ (երգովք)

25 *ԲԴԷ չիք* եւ (մեծապայծառ)

26 *Դ* բանակին մեծի

27 *ԱԳԵԶԷԹԺԻԼԽԿՅՏՅՏՅՏՅՏՅՏՅՏՅՏ* զպաշտունն ցուցանէին *A* ցուցանել *ԲԴ* կատարել *փիս* ցուցանել

28 *ԲԴԺՏՅՏՅՏ* չիք եւ

29 *ԵԸԼԽԿՅՏՅՏ* աներկիւղ եւ

30 *Դ* որք *փիս* ո՛ր որք *Է* եւ ո որք